ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանի՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Ռաֆիկ Գրիգորյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա), 2020թ. հունվարի 29-ից փետրվարի 2-ը:

Հրավիրող կողմը՝ Վիեննայի տնտեսության և բիզնեսի ու Լյուքսեմբուրգի համալսարաններ:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Ձեռնարկատիրական իրավունքի զարգացումները Հայաստանում, Վրաստանում, Հարավարևելյան Եվրոպայի երկրներում և Ընկերությունների վերաբերյալ եվրոպական մոդելային ակտ» խորագրով համաժողովին:

Քննարկված թեմաները՝ «Ձեռնարկատիրական իրավունքի զարգացումները Հայաստանում, Վրաստանում, Հարավարևելյան Եվրոպայի երկրներում և Ընկերությունների վերաբերյալ եվրոպական մոդելային ակտ» խորագրով համաժողովի ընթացքում քննարկվել են Հայաստանում, Վրաստանում, Հարավարևելյան Եվրոպայի երկրներում ձեռնարկատիրական և ընկերությունների իրավունքի ոլորտներում արձանագրված հաջողությունները, ինչպես նաև գրանցված բացթողումների ուղղությամբ միասնական մոտեցումներ մշակելու հնարավորություններին առնչվող մի շարք հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանը Վիեննայի տնտեսության և բիզնեսի և Լյուքսեմբուրգի համալսարանների համատեղ

հրավերով 2020թ. հունվարի 29-ից փետրվարի 2-ը Ավստրիայի Հանրապետությունում (Վիեննա) մասնակցել է «Ձեռնարկատիրական իրավունքի զարգացումները Հայաստանում, Վրաստանում, Հարավարևելյան Եվրոպայի երկրներում և Ընկերությունների վերաբերյալ եվրոպական մոդելային ակտ» խորագրով համաժողովին:

Համաժողովի ընթացքում քննարկվել են Հայաստանում, Վրաստանում, Հարավարևելյան Եվրոպայի երկրներում ձեռնարկատիրական և ընկերությունների իրավունքի ոլորտներում արձանագրված հաջողությունները, ինչպես նաև գրանցված բացթողումների ուղղությամբ միասնական մոտեցումներ մշակելու հնարավորություններին առնչվող մի շարք հարցեր:

Համաժողովին ելույթ են ունեցել Վիեննայի տնտեսության և բիզնեսի և Լյուքսեմբուրգի համալսարանների դասախոսներ, պրոֆեսորներ, որոնք ներկայացրել են Ընկերությունների վերաբերյալ եվրոպական մոդելային ակտի հիմնական կարգավորումները և դրանց կիրառման մեխանիզմները: Համաժողովին մասնակցել և ելույթով հանդես են եկել նաև Վրաստանի և Հարավարևելյան Եվրոպայի երկրների արդարադատության նախարարությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Համաժողովի շրջանակներում ելույթով հանդես է եկել նաև ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանը: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալը համաժողովի մասնակիցներին ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական և ընկերությունների իրավունքի ոլորտներում տեղի ունեցած վերջին զարգացումները, մասնավորապես, անդրադարձել է սնանկության ոլորտում նախատեսվող բարեփոխումներին: Այս համատեքստում, Ռաֆիկ Գրիգորյանը նշել է, որ ՀՀ արդարադատության նախարարությունը ձեռնամուխ է եղել սնանկության ոլորտի լայնամասշտաբ բարեփոխումների իրականացմանը և այս նպատակով մշակվել է համապատասխան գործողությունների ծրագիր, որն իրագործվելու է այս տարվա ընթացքում:

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանը 2020թ. հունվարի 30-ին և փետրվարի 1-ին երկկողմանի հանդիպումներ է ունեցել «Ձեռնարկատիրական իրավունքի զարգացումները Հայաստանում, Վրաստանում, Հարավարևելյան Եվրոպայի երկրներում և Ընկերությունների վերաբերյալ եվրոպական մոդելային ակտ» խորագրով համաժողովին մասնակցելու նպատակով Վիեննա ժամանած Վրաստանի և Հարավարևելյան Եվրոպայի երկրների արդարադատության նախարարությունների ներկայացուցիչների, ինչպես նաև Վիեննայի տնտեսության և բիզնեսի և Լյուքսեմբուրգի համալսարանների ներկայացուցիչների հետ: Վերջիններիս հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են առկա համագործակցության խորացմանն, ինչպես նաև երկկողմ ծրագրեր իրականացնելուն առնչվող հարցեր:

ՀՀ արդարադատության նախարարի
առաջին տեղակալ

Ռաֆիկ Գրիգորյան
05.02.2020թ.